ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«25» 12 2013թ

ՀՐԱՄԱՆ

№ 151-Ա/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 14-րդ կետի 8)-րդ ենթակետով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև նախարարության համակարգի աշխատանքները ապահովելու նպատակով.

1) նախարարի տեղակալ Ռուզան Ալավերդյանին՝ համակարգել աշխատանքները քաղաքաշինության քաղաքականության և ճարտարապետության բնագավառներում, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարության «Ալ. Թամանյանի թանգարան - ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և «Ճարտարապետության Ազգային թանգարան - ինստիտուտ» ՊՈԱԿ-ի աշխատանքները.

2) նախարարի տեղակալ Ալեքսան Կարապետյանին՝ համակարգել աշխատանքները ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման մեթոդաբանության, բնակարանային քաղաքականության բնագավառներում.

3) նախարարի տեղակալ Անուշավան Այվազյանին՝ համակարգել աշխատանքները շինարարության քաղաքականության, քաղաքաշինության ոլորտի լիցենզավորման և քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողության բնագավառներում:

2. Հաստատել սույն հրամանի 1-ին կետում նշված աշխատանքների համակարգման բաշխման կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի տեղակալների միջև աշխատանքները բաշխելու մասին» N 153-Ա/3 հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության նախարարի
2013թ. դեկտեմբերի 25-ի N 157-Ա/3 հրամանի

Նախարար
Սամվել Թադևոսյան

Նախարարի տեղակալ
Ռուզան Ալավերդյան

Քաղաքաշինության քաղաքականության և տարածական պլանավորման վարչություն

Քաղաքաշինության քաղաքականության բաժին

Տարածական պլանավորման և մոնիթորինգի բաժին

Ճարտարապետության վարչություն

Ճարտարապետության քաղաքականության բաժին

Քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների համակարգման բաժին

«Ալ. Թամանյանի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ

«Ճարտարապետության Ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ

Նախարարի տեղակալ
Անուշավան Այվազյան

Շինարարության քաղաքականության վարչություն

Շինարարական ծրագրերի բաժին

Շինարարության գնագոյացման բաժին

«Լիցենզավորման կենտրոն» գործակալություն

Լիցենզավորման բաժին

Տեղեկատվության, վերլուծության և մոնիթորինգի բաժին

Քաղաքաշինական պետական տեսչություն

Նորմատիվատեխնիկական և քաղաքաշինական փաստաթղթերի վերահսկողության բաժին

Իրավական ակտերի, վերլուծության և ընդհանուր վերահսկողության բաժին

Տարածքային բաժիններ (թվով 11)

Նախարարի տեղակալ
Ալեքսան Կարապետյան

Ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման մեթոդաբանության վարչություն

Ինժեներատեխնիկական աշխատանքների բաժին

Տեխնիկական նորմավորման և մեթոդաբանության բաժին

Բնակարանային քաղաքականության և կոմունալ ենթակառուցվածքների վարչություն

Բնակարանային ապահովման բաժին

Բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների բաժին